

ողջ ողջ մորթագերծ բրած , կրօնաւորներուն եւ ուրիշ քահանայից ու եկեղեցականաց աչքերն հանած խլած հրաշէկ երկաթներով , եւ նոյն քահանաներուն լեզուներն՝ որպէս զի Աստուծոյ խօսքը չքարոզեն ժողովրդեան՝ կտրել տուած , ինչպէս նաեւ անոնց չորս մատերն՝ որոնցմով Տէրունական մարմինը կը շօշափէին՝ ծայրակտուր բրած , եւ մեր սիրեցեալ որդին Լեւոնեառոս (= Լեւոն վերջին) թագաւորն եւ սիրելի դուստրն ի Քրիստոս Մարիամ մեծափառ Հայոց թագուհին եւ վերոյ յիշեալ կոմսն [Կոռիկոսի] , եւս եւ սիրեցեալ դուստրն ի Քրիստոս ազնուատոհմ տիկինն Փիննա՝ կոմսուհի Կոռիկոսի՝ յիշեալ կոմսին կողակիցը նոյն թագաւորութեան քաղաքաց միոյն մէջ շատ մը ուրիշ հոն գտնուած քրիստոնէից հետ ի միասին գրեթէ ինն ամիս այնքան խիստ կապանքներու մէջ արգիլած ու պահած է որ անոնք սովալլուկ ըլլալով՝ ուտելու կը ստիպուէին մուկերն ու ձիերուն կաշիները . վերջապէս ուտեստի պակասութենէն իրենք զիրենք եւ վերոյասացեալ քաղաքը տեղւոյն ժողովրդեան իսկ հաւանութեամբը նոյն ինքն Սարակի-նոսաց ձեռքն առ հարկի ի գերութիւն մասնեցին . իսկ յիշեալ Սարակի-նոսը զիրենք այսպէս գերի բրած եւ ամէն ունեցածներէն զրկելով ու մերկացնելով՝ նախ վարեցին տարին Երուսաղէմ եւ անկից Կազրի (= Կահիրէ) ըստած տեղն , ուր կը բնակէր իրենց սուլտանն . հոն յիշեալ կոմսն նոյն ինքն թագաւորին՝ թագուհւոյն եւ կոմսուհւոյն եւ ուրիշ քրիստոնէից հետ ի միասին հինգ տարւան չափ բանտարգելութիւն կրեց . արդ վերոյիշեալ թագաւորն ու թագուհին եւ կոմսուհին եւ միւս քրիստոնեայք տակաւին հոն գերի պահուած են , եւ Սարակի-նոսը կը զրդեն կը հրապուրեն զիրենք ուրանալ զՅիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ . եւ հաւանական չէ որ կարենան անոնք այնպիսի գերութենէ մը ազատիլ՝ եթէ հաւատացեալք չփութան օգնութեան հասնելու իրենց :

Ինչպէս կերելի , բաւական սխալ տեղեկութիւններ կան այս թղթին մէջ . բայց կարելի է ենթադրել , որ Սոհիէր մասնաւոր նպատակով ստած ըլլայ , — զոր օրինակ՝ իրենց « հինգ տարւան չափ բանտարգելութիւն կրելը » եւն , — որպէս զի Եւրոպայի գութը շարժէ եւ ազատէ Լեւոն :

Իսկ թղթին մէջ յիշուած « նոյն թագաւորութեան քաղաքաց մին » է Սիւ , եւ ոչ թէ Կապան , ինչպէս սխալմամբ կըսեն Եւրոպացի եւ հայ պատմիչք :